

613.81
Ա - 88

Կ. ԳԱՀԱՆ ԱՐԾՐՈՒԻՆԻ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ

№ 1.

ՄԻ ԽՄԻՐ

Մի արքենալք զինուվ,
Յորում զեղիսութիւն է:
Եփես.

ԹԻ ՁԼԻՍ

Տարբ. պատշ Հրատ., Ընկ. ։ Տիպ. Գրադ. Իզ. Տ—վա.

Большая Банкская ул.

1901

222-550
16-2013

10

610
0-ԱՐ

613. 81
Հ- 88

Մ. 20 JUL 2010

ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄՐՈՒԻՆԻ

ՖԺԵԿԻ ԶՐՈՅՑՑՆԵՐ

№ 1.

ՄԻ ԽՄԻՌ

Մի արքենալք զինուիլ
Յորում զեղխոթիւն է:
Նվիս.



ԹԻՖԼԻՍ

Տպարան Վահագ Հրատ. Ընկ. || Տիպogr. Գրադ. Իզ. Տ—վա.

1901

Дозволено Ценз., 3 марта 1901 г. г. Тифлисъ.

Ներկայ ՄԻ ԽՄԻՅ գրեյլով
սկսվում է իմ ՀԱՆՐԱՄԱՑՉԵԼԻ ԱՌՈՂ.ԶԱՊԱ-
ՀԱԿՈՆ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲՐՈՇԻՒՐՆԵՐԻ շարքը,
որոնք կերեն ԲԺՇԿԻ ԶԲՈՅՅՆԵՐ ընդհանուր
վերնագիրը եւ մի բանի տարուայ ընթացքում
կըկազմեն մի փոքրիկ ԱՌՈՂ.ԶԱՊԱՀԱԿԱՆ-
ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ:

Այս գրեյլները յուսով եմ լոյս ընծայ-
ել որքան կարելի է յանախ եւ որչափ
հնարաւորէ էժան զնով, որպէս զի նրանի
մատչելի լինեն ամեն մէկին եւ լայնօրէն
տարածվեն ժողովրդի մէջ:

ԹՃԿ. Ա. Ա-ՃՐՈՎԵԼԻ.

I

ԱՐԲԱԾ ՄԱՐԴԻԼ

Ի՞նչ կայ աշխարհում՝ աւելի զգուելի և,
միենոյն ժամանակ, աւելի խղճալի, քան ար-
բած մարդը։

Նա կորցրել է բանականութիւնը, կոր-
ցրել է հասկացողութիւնը, կամքը։

Նա դառել է կամ մի գաղան, որը կա-
տաղած սրա նրա վրա է ընկնում, հայ-
նոյում; Ճեծում, սպանում ու ջարդում
փշում, ինչ որ ճեռն է ընկնում, կամ թէ
չէ—մի փալաս, որին ինչ ուզես կարող ես
անել, ուրիշ խօսքով. Նա բոլորովին ան-
զգայ է. այլևս ոչ տեսնում է, ոչ լսում; ոչ
զգում։

Եթէ այդ ժամանակ քննէք արբածին,
ահա թէ ինչ կտեսնէք։

Դէմքը արիւն լցված-կարմրած, աչքերը
խփած, չնչառութիւնը ծանրացած և խըռ-
խուան, ամբողջ մարմինը սառած ու սառը

բրտինքով ծածկված, պոօշները, քիթը
ձեռնելն ու ստերը կապտած, մարմինը ան-
շարժ ու անզգայ դառած, այնպէս որ կա-
րելի է կտրատել, և արբածը ոչինչ չի զգայ-
նա մեռելի պէս վայր է ընկած, անզգայա-
բար փախում է ու աղք հանում, երբեմն էլ
հէնց այս դրութեան մէջ մեռնում:

Այս ի՞նչ բան է, ի՞նչն է այդ օրը դցում
մարդուն:

Դուք գիտեք, որ Հնդկաստանցիք, կամ
հէնց մեր երկրում ապրող մահմեդականնե-
րից էլ շատերը, ափիոն (օթի) և հաշի-
են ծխում ու ընկնում են մի տեսակ մե-
ռելային քնի մէջ և նոյնպէս անզգայ են
դառնում, ինչպէս և խմիչքներով արբած-
ները:

Ի՞նչ պատահեց:

Թէ ափիոն ընդունողը և թէ գինիօղի
խմիչք—երկուսն էլ թունաւորուել են:

Ուրեմն թէ ափիոնի և թէ խմիչքների
մէջ թոյն կայ:

Տեսնենք, թէ ինչն է խմիչքների միջի
թոյնը:

II

ԽՄԻՉՔՆԵՐԻ ՄԻԶԻ ԹՌՅՆԸ

Բոլոր արբեցնող խմիչքների (օղիի, գիւնու, գարեջրի, զանազան լիքեօրների) գլխաւոր ազդող (արբեցնող) մասը ոգին է:

Այս պատճառով էլ այս խմիչքները կոչվում են ոգելից խմիչքներ:

Այս նիւթը ուրիշ շատ անուններ էլ ունի. ալկօհօլ, սպիրտ:

Մենք գործ կածենք այս բոլոր բար-
ոերն էլ:

Այս ալկօհօլն է այն քոյնը, որը խում
է մարդուց նրա քանականութիւնը, նրա
զգայողութիւնը, նրա կամքը:

Խմիչքները զանազան տոկոս սպիրտ են
պարունակում իրանց մէջ: Այս տոկոսը կոչ-
վում է աստիճան ^{*)} և նշանակվում է այս-
պէս ^{0.}

0դին պարունակում է իր մէջ մօտ 40 ^{0.}

Գինին » » 8—15 ^{0.}

*) Աստիճան նշանակում է հարիւրից որոշ մասը,
օրինակ, եթէ ասում են գինին 12⁰ ալկօհօլ է պարունակում,
այդ նշանակում է, որ 100 մաս գինու մէջ 12 մաս ալ-
կօհօլ կալ (օր. 100 մսխալի մէջ՝ 12 մսխալ):

(Կալսէթու դինին 8—10°, Գանձակինը
—10°, Երևանինը—15°).

Գարեջուրը 2—7°.

Միւս խմիչքները (կոնեակ, լիքեօրներ)
օղիից աւելի թունդ են:

Ալկօհոլը արագութեամբ ծծվում է
ստամիքսի միջից ու լցվում արեան մէջ:
Խմելուց երկու-երեք րոպէ հաղիւ անց, ար-
գէն արեան մէջ կարելի է լինում ալկօհոլի
հետքեր դանել: Լցվելով արեան մէջ,
սպիրտը մէկ-երկու օր (նայելով թէ ինչքան
է խմել մարդ) շրջում է արեան հետ
մեր մարմնի բոլոր մասերի մէջ և անդա-
դար թունաւորում մեր մարմնի մասերը.
այսինքն, մեր ներքին գործարանները, մեր
ուզեղը: Այս թոյնը անվերջ չի մնում մար-
դու մէջ, նա դուրս է նետվում չնչառու-
թեան, մէզի ու քրտնքի հետ:

Այն մարդու արիւնը, որը ամեն օր է
խմում, ժամանակ չի ունենում մաքրվելու,
որովհետեւ դուրս հանած ալկօհոլի տեղը
բռնում է նորը. և այսպիսով ամեն օր դի-
նիւարադ գործ ածողի արիւնը անդադար
տարածում է այդ սարսափելի թոյնը մեր
մարմնի խորքերը:

III

**ՍՈՒՐ (յանկարծակի) ԵՒ ԵՐԿԱՐԱՏԵՒ
(դանդաղ) ԹՐԻՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ**

Թունաւորութիւնը երկու տեսակ է լիւ
նում. սուր և երկարատեւ:

Սուր կամ յանկարծակի, երբ մարդ-
կարճ ժամանակուայ մէջ (օրինակ մի կամ
մի քանի ժամուայ) չափազանց շատ գինի,
օղի, գարեջուր կամ մի ուրիշ խմիչք է
խմում և ընկնում է վերև նկարադրած
դրութեան մէջ: Սա խկական արքելն է:

Երկարատեւ թունաւորումն լինում է
դանդաղ կերպով, երբ որ մարդ ամեն օր
շատ թէ քիչ օղի ու գինի է դործ ածում:
Թէե այդ ձևով խմողը խկապէս չի ար-
բում, բայց թոյնը իր դործը տեսնում է
ու կամաց-կամաց քանդում է խմողի կազ-
մուածը:

Այս տեսակ թունաւորումն կազմում է
ալկօհօլիկմ կամ ալկօհօլականութիւն, և
թունաւորված մարդը դառնում է ալկօհօ-
լիկ: Շատերը կարծում են, թէ միայն ար-
քելն է զնաս մարդու և թէ քիչ-քիչ խմելը

ընդհակառակն օգուտ է և արքեցող կոչում
են այսպիսիներին միայն, որոնք յաճախ
են գինովանում։

Չատ անգամ մենք, բժիշկներս, այս-
պիսի խօսքեր ենք լսում։

—Բժիշկ, իմ խմածն ինչ է որ, կեան-
քումն գուցէ մի տասն անգամ արբած չը-
լինեմ։ Իմ խմածն ոչինչ բան է. օրը մի
երկու թաս արազ ու ճաշի վրա մի շիշ
գինի խմեմ-չսմեմ, այդ է։ Դրանով ինչ պի-
տի լինի մարդու։ Իմ խմածը շատ չափա-
ւոր է։

Մի երկու թաս արազ ու մի շիշ գինի
խմելը չափաւոր են համարում! Մի հարց-
նող լինի, թէ ի՞նչ ասել է չափաւոր։ Ո՞վ է
չափ գրել։ Ի՞նչ էք կարծում, մի գաւաթ
օղին չափաւոր է, թէ չէ։ Զափ էք ուզում։
ասեմ։ Բժիշկները գտել են, որ հասակա-
ւոր մարդը ամբողջ օրուայ մէջ կարող է
անվտանգ խմել, գիտեք ինչքան, —մի հացի
գդալ, ամենաշատը —երկու գդալ, այն էլ
ջրով, այն էլ քիչ-քիչ, 24 ժամուայ մէջ։

Մենք, բժիշկներս, շատ թոյներ ենք գործ
ածում զանազան հիւանդութիւնների գէմ
և գիտենք, որ միենոյն գեղը չի կարելի

երկար ժամանակ տալ հիւանդին, թէ չէ կը թունաւորվի. յայտնի է նոյնպէս, որ ամեն հիւանդի միենոյն չափ դեղ չի կարելի տալ. —մէկին քիչ են տալիս, միւսին շատ:

Այսպէս էլ ալկօհօլն է:

Նրա համար չափ չկայ:

Մէկին մի գաւաթ օղին առանձին վնաս չի տայ, բայց մի ուրիշի գլուխը կը ցաւեցնի, մարմինը կթուլացնի, ուրիշ խօսքով. կթունաւորի:

Յետոյ չպէտք է մոռանալ, որ եթէ իրար վրա խմիչքները ընդունել, նորը հնի վրա կաւելանայ և այսպիսով վերջիվերջոյ արեան մէջ թոյնը, քանի գնայ, կշատանայ:

Հիմի տեսնենք, թէ ինչ են ալկօհօլի տուած վնասները:

Բայց ասելիքներս լաւ հասկանալու համար պէտք է խմանալ հետեւալը.

Մեր կերածն ու խմածը լցվում է մեր ստամքութ: Սա մի պարկ է, որի պատերը ծածկված են նուրբ թաղանթով (կաշիով): Այս թաղանթը արտադրում է մի հեղուկ (ինչպէս, օրինակ, մեր մաշկը արտադրում է

ճարպ ու քրտինք), որը հալումնարսում է մեր կերածը՝ կիսամարսած կերակրի մի մասը (ջրային մասը) ծծվում է հենց ստամիքսի պատերի միջով ու լցվում արեան մէջ, իսկ մնացած մասերը լցվում են աղիքները, այնտեղ աւելի ևս լաւ մարսվում են ու ծծվում աղիքների պատերով և նոյնպէս խառնվում արեան հետ:

Այսպիսով մարսված-հալված հիւթերը լցվում են մեր արեան մէջ, որը նրանց տանում ցրվում է մեր մարմնի բոլոր մասերը՝ ինչ տեղ որ ասեզով ծակես, արիւն դուրս կըգայ: Այդ ինչ է նշանակում: Այդ նշանակում է, որ մենք ծակեցինք մի կամ մի քանի երակները Ռւրեմն արիւնը տարածվում է ամեն տեղ, նոյնպէս էլ կերակուրը:

Հիմի, եթէ կերակրի հետ միասին, կամ առանց կերակրի, մենք դինի կամ օղի խը մենք, նրանց միջի ալկօհոլը կծծվի, կլցվի արեան մէջ ու կտարածվի մեր մարմնի բոլոր անկիւնները: Էլ չի մնայ մի մաղաչափ տեղ, որտեղ չդիպչի այդ թոյնը:

Այս գիտենալով, ամեն մարդ կհասկանայ, որ ալկօհոլը պիտի թունաւորի մեր մարմնի բոլոր մասերը, մեր բալոր դործա-

բանները (լերդը, փայծաղը, սիրտը, երակաները, երիկամուճները, թռքերը, ուղեղը, ներվերը և այլն):

Ամենից առաջ խօսենք ուղեղին հասած վասաների մասին:

Ուղեղը մեր մարմնի ամենաքնքոյշ մասըն է, այս պատճառով էլ ալկօհոլը ամենից առաջ նրա վրա է ազդում:

IV

ԱԼԿՈԶՈԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՈՒՂԵՂԻ
ՎՐԱ.

Ուղեղի մէջն է մեր խելքը, բանականութիւնը, մեր ոյժը, մեր զգացողութիւնները:

Լուրջ (Հսմած) մարդը լաւ հասկանում է իր լսածն ու տեսածը, ջոկում է լաւն ու վատը, կարողանում է գնահատել իր արածներն ու ուրիշների արածները. նա իր կամքի տէրն է, զգոյշ է թէ իր խօսքերի և թէ շաշմումների մէջ, կարողանում է զբապել իրան, երբ պէտք է:

Մարդուս այս բոլոր աստուածատուր
ընդունակութիւնները գինու և օղիի թու-
նաւորման տակ կորչում են:

Արբածի «գլուխը գատարկ է»:

Էլ ոչ մի արդեքք չկայ նրա լիզուին ու
շարժումներին: Ի՞նչ որ բերանը գալիս է,
ասում է, ամենքին դիպչում, վիրաւորում:
Խեղճ, «գառն» մարդիկ առիւծ են գառնում
և ընդհակառակը, շատ «աժդահաներ» խեղ-
ճանում են, ցաւոտում ու երեխայի նման
լաց լինում:

Դինովցած մարդը էլ ոյժ չունի իրան
զսպելու. նա իր սիրտը բաց է անում ամեն-
քի առաջ, իր գաղտնիքները ամենքին պատ-
մում: «Ճշմարտութիւնը գինու մէջն է», առ-
սում է հին առածը: Երբեմն ինքը զգում
է, որ ասած-խօսեցածը անտեղի է, յիմա-
րութիւն է, բայց այնքան ոյժ չունի, որ
պահի իրան:

Գինին ու օղին թմրեցնում են-բբա-
ցնում մարդուս զգացողութիւնները:

**Այս հիմնական բանը պէտք է միշտ աչ-
քի առաջ ունենալ:**

Դինովցած մարդը այլևս չի զգում իր
ցաւերը, մոռանում է իր վշտերը, մոռա-

նում է քաղցն ու ծարաւը, չի գտում յոդ-նածութիւն, նրա սիրտը դատարկվում է, ազատվում է վշտերից ու թեթևանում, ի հարկէ ժամանակաւորապէս, որովհետեւ, երբ որ գինու զօրութիւնն անցնի, նրա ցան ու վիշտը կըկրկնապատկվեն:

Սպիրտը գուլացնում է նոյնպէս և քաղցը, այս պատճառով շատերը կարծում են, թէ արադը սիրտ է դնում։ Ել չեն հասկանում, որ մարդ դարձեալ քաղցած է, բայց սպիրտը գուլացը ել է նրա բոլոր զգացողութիւնները և դրա համար էլ նա չի զգում իր անօթութիւնը։

Բանուորները մեծ քանակութեամբ սպիրտ են գործ ածում, որպէս զի ցրեն իրանց յօդնածութիւնը և աւելի գործ շինեն. բայց չեն հասկանում, որ յօդնածութիւնն էլի մնում է և միայն իրանք իրանց խափում են։

Մի ուրիշ ինքնախաբութիւն էլ։

Մրսող մարդը մի գաւաթ օղի է խըմում, որ տաքանայ, և նրան թվում է, թէ ճշմարիտ որ տաքանում է։ Բայց չի հասկանում, որ նրա մարմինը ոչ միայն չի սահնում, այլ ընդհակառակը սառչում է,

միայն սպիրտը կորցնել է տալիս նրան ցրտի
զգացողութիւնը:

Եւ, յիրաւի, այժմ գետնականները ա-
պացուցել են, որ ալկօհօլը սառեցնում է
մարդուն:

Այս հիման վրա է, որ բժիշկները տա-
քութեան դէմ գինի ու զանազան ոգելից
խմիչքներ են տալիս հիւանդին:

Այս հիման վրա է նոյնպէս, որ շոք
տեղերում, օրինակ, Հնդկաստանում, ժողո-
վուրդը օդի է խմում հովանալու համար:

Ո՞վ չի գիտի, որ ձմեռը արբած մարդիկ
աւելի հեշտ են սառչում փետանում ու շատ
տեսակ հիւանդութիւններ ստանում (օր.
թոքերի բորբոքումն, պլոճիկների հիւան-
դութիւններ և այլն):

Աւելորդ է աւելի երկար խօսել այս
մասին: Ասածներիցո պարզ է, որ խմիչքին
յատկացրած զօրութիւնները սխալ են:

Խմիչքը մարդու չի սաբացնում,

Խմիչքը մեր ոյժերը չի աւելացնում,

Խմիչքը մեզ սնունդ չի տալիս:

Մարդիկ խաբում են իրանք իրանց:

Հնդհակառակը.

Խմիչքը սառեցնում է մեր մարմինը,

նա պակսեցնում է մեր ոյժերը, քայլայում
է մեր առողջութիւնը, հիւանդացնում ու
սպանում մեզ:

Նա մի թոյն է, որը գուշացնում է, մեռցնում է մեր մէջ զգացողութիւնը. այս պատճառով էլ մենք չենք զգում ոչ քաղց, ոչ յոգինութիւն, ոչ պուրած:

V

ԱԼԿՈԶՈՒՆԻՉՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՄԵՐ ԽԵԼ-
ՔԻ ՈՒ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱ.

Սկզբներում խմողը մի անորոշ տիպութիւն ու տաղակութիւն է զգում, յետոյ կամաց-կամաց վշտաւորփում է: Երեկոյեան, երբ պառկում է քնելու, նրա աչքին սարսափելի տեսիլներ (ցնորք) են երկում: Նրան մօտենում են դարշելի դէմքով զարհուրելի գաղաններ ու առարկաններ: Նրան թւում է, թէ սարսափելի գիշատիչ գաղաններ յարձակվում են վրան, խածում են, խեղդում են նրան, կամ ինքը ընկնում է զարհուրելի մութ գուրերի մէջ, կամ իբր թէ նրա ետեկց ընկել են, հասուէ հաս են, պիտի բռնեն, գանձով մարք խրեն և այլն և այլն:

СУРГУТСКИЙ МАШИННИЙ ЗАВОД
С. С. Р. А. ПУОЛНЧ + ВАСИЛИЕВА
7/3/1922
И. И. УЗИЧЕВ. МАШНИКИН

Խեղճը լեզապատառ, սարսափահար եղած, աչքերը բներից դուրս թռած, շընչասպառ, ճակատը քրտինք կոխած փախչում է երեակայական թշնամուց կամ կոխումնում նրա հետ։ Այդ ժամանակ արքեցողը կարող է սպանութիւն գործել, ամեն ինչ ջարդել, կոտրտել։

Այս դրութիւնը կոչվում է ցափուտանի կամ ալկօնօլական զառանցանի (ռուսերէն. սպիտակ ջերմ—նելայ горячка).

Երբեւ օրինակ, առաջ բերենք մի կնոջ զառանցանկը՝ «Յանկարծ նա լսում է իր ազգականների ձայները, իր աղջկայ լաց ու կոծը, իբր թէ այդ աղջկան քարշում են տանում. պատի վրա նրան երեսում են սարդի ոստայն (սալանդոստ), թոքեր, սարդեր, որոնց ցանցի մէջ երեսում են սեսսե գնդակներ։ Այս գնդերը վրկում են ու սեղմիում, դառնում են մկներ, կատուներ, որոնք անցնում են սարդի ծակերի միջով, թռչում են անկողնու վրա ու անհետանում։ Յետոյ նրա աչքին երեսում են թռչուններ, այլանգակ ծռմուած գէմքեր, կապիկներ, որոնք վազվառմ են, մօտենում ու անհետանում պատի մէջ. յետոյ դուրս են գալիս հաւի

ճուտեր, որոնց նա աշխատում է բռնել, բայց նրանք փախչում են։ Հարեւան տան կտուրի վրա երեսում են մարդիկ, հրացանները ձեռքերին, պատերի միջից դուրս են ցցվում բեկոլվերի ծայրեր, իրան ուղղած, ամեն կողմ հրդեհ, տները փլատակվում են, ամեն ինչ կործանվում է։ Եւ այս սարսափաների մէջ, նա տեսնում է, ինչպէս կտրատում են իր մարդուն ու երեխաներին։ Սրանք դուռում են, «հրդեհ, սպանում են» և օդնութիւն են կամնչում։ Նա լսում է զանգակների ձայներ, երաժշտութիւն, երդի ձայներ։ Ծառերը կարծես պարում են նրա առաջ և այդ ծառերից կախ են ընկած գոյնզգոյն գնդակներ, որոնք անդադար փրփում են ու կծկվում. երբեմն գոյնզգոյն կրակներ լուսաւորում են երկինքը։»

Առհասարակ ալկօհօլիկները շահախ տեսնում են խաքեական տեսիլներ (տեսողական ցնորդներ), օր. ճանճեր, կայծակներ, փայլատակումն և այլն։ Վերջապէս տեսողութիւնը պակասում է ու հիւանդը կուրանում։

Լսողութիւնը նոյնպէս այլայլված է։ Հարիւր տեսակ օտարոտի, անախորժ ու

սարսափելի ձայներ լցնում են նրա ականջները։ Խեղճերը լսում են երբեմն սոսկալի հրամաններ։ Մէկին մի ձայն անդադար հրամայում էր, որ գնայ իր զաւակին սպանի, որ նա ստիպված է շինում կատարել, ու կացինով սպանում է մանուկին։

Ուղեղի այդ հիւանդական դրութիւնը գնալով վատթարանում է, արքեցողը դառնում է կիսախել, կորցնում է անձնափրութիւնն ու պատուասիրութիւնը, դառնում է անբարոյական, չարագործ, զազանաբարոյ, կամ ողորմելի մի փալաս, որ միայն զայռոյ ու զգուանի է յարուցանում մեր մէջ։

Ալկօհօլիկը կորցնում է իր աշխոյժը, դառնում է ծոյլ, անքան, տխուր, մելամաղձոս, փախչում է հասակութիւնից, մեռնում է ամօթից։ Նրան թւում է, թէ ամենքը թքում են վրան, թէ նա խայտառակված է, թէ նա յանցաւոր է, նրան պիտի բռնեն, կախեն։

Մի քանիսներին թւում է, թէ իրանք այլես մարդու կերպարանք չունեն. դարձել են կին, շուն կամ մուկ, կամ թէ իրանց մարմինը փտած է, քրքրված, հոտում է եւ այլն։

Այսպիսով, ալկօհօլիկը կամաց-կամաց հասնում է խելագարութեան:

Հաշուած է, որ 100 գմբերից 20-ը ($1/5$ -ը) արբեցողներ են եղած կամ արբեցողների զաւակներ: Թրանսիայում՝ խելագարվողների թիւը հասնում է տարեկան 1500-ի: 1881-ից մինչև 1885-ը պատսպարված են եղել հիւանդանոցներում 57,207 խելագարներ: Եւ քանի աւելանում է ալկօհօլի գործածութիւնը մի երկրում, այնքան էլ աճում է գմբերի թիւը: Բացի այդ, ալկօհօլիկի կեանքը յաճախ այնչափ անտանելի է դառնում, որ նա ինքնասպանութիւն է գործում: Մի գիտնականի հաւաքած տեղեւկութիւններին նայելով, 4,596 անձնասպաններից 530-ը ալկօհօլիկներ են:

V

ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆ

Շատերը առանց մի թաս արագի չեն կարող հացի նստել: Եթէ բանը հէնց այդ մի թասով վերջանար, մենք ոչինչ չէինք ունենալ ասելու: Դէ, ինչ անենք, սովորութիւն է, կասէինք. թող խմի, ախորժակը բացուի:

Բայց այդ մի բաժակով հօ չեն բաւականանում։ Մէկը երկու է դառնում, դրա վրա աւելանում են մի քանի բաժակ դինի և այլն։

Այն ժամանակ ստամբուլ հիւանդանում է; Վերցրէք մի կում օղի ու մի քանի բոպէ բերանում պահեցէք, տեսէք, թէ ինչ կլինի ձեր բերանը։

Բա որչափ պիտի վնասվի ստամբուլ, որտեղ այդ օղին երկար ժամանակ մնում է ու անգաղար գրգռում նրա թաղանթը (թաղանթը այն բարակ կաշին է, որ ծածկում է ստամբուլ ներսից), քանի որ այդ թաղանթը աւելի նուրբ է ու աւելի բարակ, քան բերանինը։

Խմիչքները գրգռում են մեր ստամբուն ու, եթէ այդ գրգռումն օրէց օր կրկնվում է երկար ամիսներ ու տարիներ, ստամբուլ հիւանդանում է։

Այն ժամանակ հիւանդը կսկսի գանգատվել, թէ կերածը լաւ չի մարսում։

Հարց ու փորձ ենք անում։

—Ախորժակդ ինչպէս է։

—Ախորժակ չունեմ, բժիշկ։

—Առաւօտը վեր կենալիս ի՞նչպէս ես
զգումքեց:

—Սիրաս խառնում է, հէնց որ ոտս
գետին եմ դնում, մաղձ եմ թափում:

—Ի՞նչ ես ուտում:

—Աւելի թթու, կծու, աղի, այսպէս—
սուր բաներ կերածս էլ չեմ մարսում: սըրս
տիս քայիսում է, դկուտում եմ, անդադար
փորս զողուում է, խայտառակ եմ եղել,
մարդամիջի չեմ կարող նստել:

—Ճաշից յետոյ քննում ես:

—Հա, բժիշկ, ինչ անեմ: Գլուխս ծանս
րանում է, ոտերս թուլանում են, քունս
սաստիկ տանում է: Ի սէր Աստծու, մի ճար
արէք. բանից-գործից աւարայ եմ եղել:

Ի՞նչից է առաջացել այդ հիւանդու-
թիւնը:

Մենք ասացինք, որ ալկօհօլը գրգռում
է ստամոքսի լորձային թաղանթը:

Հիմի երևակայեցէք, որ այդ բանը
կրկնվում է ամեն օր, այսինքն մարդ ամեն
օր է խմում. ի՞նչ կդառնայ նրա ստամոքսը:

Նա կըորբնվի:

Մենք վերեն ասեցինք, թէ ստամոքսի թաղանթը արտադրում է մի հեղուկ, որ մարսեցնում է մեր կերած բաների մեջ մասը։

Երբ որ, ալկօհօլի աղդեցութեան տակ, ստամոքսի այդ թաղանթը կրորբոքվի, այն ժամանակ նա այլևս չի կարող կանոնաւոր մարսեցնող հեղուկ տալ, որովհետեւ գըրդոված լորձային թաղանթը կամ փոքր բանակութեամբ է հեղուկ արտադրում; կամ սա չունի հարկաւոր ոյժ։ Սրանից կառաջանան այն բոլոր անմարսողութիւնները, որոնց վրա գանգատվում էր մեր հիւանդը։ Մարսած կերակուրը երկար ժամանակ մընում է ստամոքսի մէջ, լայնացնում նրան, վերքեր գոյացնում նրա թաղանթի վրա և այլն։

Այսպէս փչացած ստամոքսը, ի հարկէ, չի կարող լաւ մարսել. հիւանդը անբաւարար սնունդ է ստանում, լզարում է, դառնում է կմախք։

Ժողովրդի մէջ այն կարծիքը կայ, թէ խմիչքը չաղացնում է մարդու, մանաւանդարւուրը։

Այդ ճշմարիտ է. բայց մեկ որ—այդ
չաղութիւնը կեղծ չաղութիւն է. մարդ
վկրվում է, երկրորդ—եթէ խմող մարդը
մի քիչ էլ լցվում է, այդ ժամանակաւոր է
լինում, քանի դեռ ստամերու չի հիւան-
դացել ու դեռ կարող է կերածը մարսել:

VII

ԼԵՐԴԻ ՈՒ ՊԼՈՃԻԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ

Յաճախ մեր ընկունարանը մտնում են
նիհար մարդիկ, որոնց աչքերի սպիտակուցը
դեղնել է: Խսկոյն երևում է, որ դրա լերդն
է հիւանդ: Հաղուստը հանել ենք տալիս և
ի՞նչ ենք տեսնում: Վորը սաստիկ ուռած-
տողած է, վրայի կաշին ձգված, այնինչ
կուրծքը, թևերն ու ոտերը լզարած, կմախը
դարձած, ամբողջ մարմնի կաշին դեղնաւուն
դոյն ստացած:

—Քանի ժամանակ է, որ այդպէս էք,
հարցնում ենք:

—Շատ ժամանակ է, պ. բժիշկ. վորս
կամաց-կամաց ուռած: Առաջ ականջ չէի
դնում, բայց հիմի շունչս կտրվում է. ոչինչ

չեմ կարող ուտել, ախորժակս բոլորովին
կորել է. ինչ էլ ուտում եմ, չեմ մարսում—
կամ ետ եմ դարձնում, կամ ըքնած մնում
ամբողջ օրը:

—Յաւեր ունէքք:

—Օ՛, սաստիկ... ամբողջ փորս ցաւում
է, մանաւանդ այս կողքի ծակոցը իմ հոս-
դին հանում է: Մի ասացէք, ի ոէր Աստծու,
ինչ կայ փորումն, որ այսպէս ուռած է:

—Զուր է լցված:

—Զուր... զարմացած բացականչում է
հիւանդը.—Հուրը որտեղից է:

Դէ, բժիշկը հօ ամեն բան չի կարող
բացատրել:

—Խմելուց է: Գինի, արաղ շատ էք
գործ ածում, հարցնում ենք:

—Հա, քեզնից պահեմ, Աստծուց ինչ
պահեմ: Դէ, ես էլ շիրաչի եմ, իմ փէշակն
էլ այդ է, ամեն մուշտարու հետ մի թառ
պիտի խմեմ, որ ծախեմ:

—Է՞լի, օրական բանի շիշ գինի ես
խմում:

—Ետո էլ չէ, պ. բժիշկ. երկու-երեք
շիշ հաղիւ լինի խմածու. Է՞հ, մի երկու թառ
էլ օղի ճաշէ-ճաշ, այդ է:

Այդքանը շատ չի թվում մեր գինեվառառին, երբ արդէն սպիրտը փշացրել է նրա ներսը!

Եւ, յիրաւի, նրա լերդը ուռած է, հիւանդ, փայծաղը փքված, փորը ջուր իջած:

Խեղճը կամաց-կամաց իր ձեռով իրանգերեզման է փորել, և իսկի չի էլ կասկածում, թէ խմելուց է:

Այս դէպքերում առհասարակ պլոնիւկներն էլ են հիւանդ:

Հարցնում ենք.

—Ոտներդ հօ չեն ուռչում:

—Երբ որ երկար ժամանակ ոտի վրա եմ լինում, երեկոյեան դէմ զգում եմ, որ կօշիկներս հուպ են տալիս: Հանում եմ տեսնում, որ ոտներիս երեսն ուռած է, մասով սեղմելիս—պճում է, փոս ընկնում:

Այդ է. խեղճի պլոնիկներն էլ են բռնված:

Ոտի այդ ուռչելը հիւանդութեան սկզբներում գիշերը մինչև առաւօտ կը քաշվի, բայց շուտով գիշերն էլ չի քաշվի. ընդհակառակը, քանի դնայ—կաւելանայ, կըբարձրանայ մինչև ծնկները, յետոյ մինչև աղդքերը, յետոյ փորը, ու խեղճը ուռուցոր կդառնայ—կմեռնի:

VIII

ՄՐՏԻ ԵՒ ԵՐԱԿԱՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ

Գիտենք, որ ալկօհօլը մարսողական
դործարանից (ստամիքսից ու աղիքներից)՝
կամաց-կամաց ծծվում է արեան մէջ ու,
արեան հետ խառնվելով, արագ շրջում է
շնչերակների ու երակների միջով*):

Ուրեմն նա անդադար ներդործում է
սրտի ու արեան անօթների վրա և պի-
տի այրի սրտի ու այս խողովակների պա-
տերը:

Եւ, յիրաւի, այդպէս էլ լինում է:

*) Արինը պարունակվում է սրտի և արնասար ա-
նօթների մէջ: Այս վերջինները բաժանվում են երկու տե-
սակի. 1) շնչերակներ, որոնց մէջ շրջում է ալ արին
(մաքուր), որ սրտից հոսում է դէպի մարմնի բոլոր ան-
կիններն ու տանում իր հետ սնունդ մեր ամբողջ կաղ-
մուածքի համար, և 2) երակներ, որոնց միջով մեր
մարմնի բոլոր մասերից փչացած ու արինը լցվում է
սիրտը: Սրտից այս սև արինը լցվում է թոքերը, որտեղ
նա մաքրվում է և զառնում է կարմիր արին ու նորից
վերագառնում է սիրտը (Սրտի մէջ այս երկու տեսակ ա-
րինները չեն խառնվում, որովհետեւ հոսում են առանձին
խոռոչներում):

Ալկօհօլիկներն առհասարակ տանջվում են սրտի բարախումից և շնչարդելութիւնից:

Յաճախ մեզ վիճակված է լինում ինաւմել այսպիսի խեղճ հիւանդների, որոնց սիրտը անկանոն է գործում, արիւնը անկանոն կերպով է հոսում երակների մէջ, շնչառութիւնը կցկառւը է. մի ծանր գործ շինելիս, կամ հէնց արագ ման գալիս ու սանդուխներ բարձրանալիս, նրանց սիրտը թռչունի պէս թրթռում է կրծքի մէջ ու շունչը կարվում:

—Պ. բժիշկ,—պատմում են սրանք,—մի քանի տարի է, ինչ այսպէս «թանգանաֆաս» եմ. մի ծանր բան չեմ կարող վերցնել այստեղից այնտեղ տանել: Բանի պէտք չեմ. մի քանի անգամ էլ խելքս մաղել է, վայր եմ ընկել:

Քննում ենք ու ինչ ենք տեսնում:

Սիրտը լայնացած է, մեծացած, հիւանդ, անկանոն է խփում, շնչառաքիւնը ծանր, երակները կուտացած, կարծրացած, կարծես պարաններ լինեն:

Շուտով այս թշուառ ալկօհօլիկի դլսի միջի երակներից մէկը կպատռվի, արիւնը կլցվի ուղեղի մէջ ու կսպանի նրան, կամ

եթէ չսպանի էլ, անդամալոյծ կդարձնի:
իսկ եթէ այդպէս չմեռաւ, կմեռնի ուշ
րիշ պատճառից: Սիրտը կթուլանայ, արիւ
նը կկանգնի երակներում, ոտերը կուռչեն,
մարդը կուռուցորի, կամ սիրտը մի օր կը-
յոգնի, կկանգնի և ամեն ինչ կվերջանայ:

Մի երկու խօսքով ասենք այն էլ, որ
արքեցողը վերջի վերջոյ անընդունակ է
դառնում սեռական յարաբերութիւններ ու-
նենալու, և ամուսնացած տղամարդը անկա-
րող է գառնում իր ամուսնական պարտքը
կատարելու: Մի սրամիտ գիտնական ասել է.
«Աստղիկը (սիրոյ չաստուածուհին) ու Բա-
քոսը (արքեցութեան չաստուածը) հաշտ չեն
իրար հետ»:

IX

Ա.ՐԲԵՑՈՂ ՄԱՅՐՆ ՈՒ ԾԾՄԱՅՐԸ

Մօր կամ ծծմօր խմած զինու մի
մասը անցնում է կարի մէջ ու արքեցնում
ծծկեր երեխային: Իսկ եթէ մայրը գինեմոլ է,
նրա կաթը անպէտք է գառնում, երեխան
վատ է սննդվում, վատ է զարգանում ու
երկար չի ապրում:

X

Ալկօհօլիկը աւելի նեշ է հիւանդանում ու աւելի դժուար առողջանում:

Ալկօհօլը թուլացնում է մեր ամբողջ մարմինը, որ ամեն մի չնչին պատճառից հիւանդանում է: Վարակիչ հիւանդութիւնները (խօլերա, ժանտախտ, տիֆ և այլն) աւելի շատ զոհեր են տանում ալկօհօլամոլների միջից, քան չսմողների:

Բացի այդ, միենոյն հիւանդութիւնը արբեցողի վրա աւելի երկար է տեսում և աւելի դժուար է բժշկվում, քան լուրջ մարդկանց: Խմողի վրա մի հասարակ վէրքը մեծ բան է դառնում: Նրա մի թեթև մրսելը երբեմն սարսափելի հետևանքներ է ունենում: Խնֆլուէնցան, որ ուրիշների վրա ընդհանրապէս հեշտ է անցնում, խմողի վրա յաճախ բարդվում է թոքերի բորբոքումով, որ կարող է սպանել նրան:

XI

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՈՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԳԻՆԻ
ԽՄԵՑՆԵԼՈՒ ՎՆՍՍԼ

Մենք տեսանք, թէ ինչ սոսկալի վնաս-
ներ է հասցնում ալկօհօլը հասակաւորնե-
րին:

Ո՞րքան աւելի մեծ պիտի լինի նրա վնա-
սը երեխաների ու գեռահամերի վրա. չէ
որ սրանց թոյլ կազմուածըլը աւելի հեշտ
կթունաւորվի: Քանի փոքր է երեխան, այն-
քան էլ մեծ է խմիչքի վնասները նրա
վրա:

Մանր երեխաները, որոնց ծնողները
մի քանի ժամանակ գինի են խմացնում,
իբր թէ նրանց կազդուրելու համար, զար-
մանալի կերպով բժանում են, նուազում ու
հիւանդուվում:

Քրիստոսից դեռ 400 տարի առաջ մի
մեծ գիտնական արգելում էր խմիչքներ տալ
գեռահամերին:

Ալկօհօլը արգելում է պատանիներին
զարգանալ, նրանց ոյժը պակսում է, ըն-
դունակութիւնները չեն զարգանում:

Խմիչքը վաղաժամ գրգռում է տղայի սեռական կիրքը: Առհասարակ երիտասարդ արբեցողները զարմանալի կերպով անբարոյական են դառնում: Միմիայն Գերմանիայի մէջ տարին 200,000 երիտասարդ դատապարտվում են զանազան անկարգութիւնների ու յանցանքների համար, որ դործել են արբած ժամանակ:

XII

ԱԼԿՈԶՈԼԱՄՈԼԻ ՍԵՐՈՒՆԴԸ

Ալկօհօլիկները ոչ միայն քանդում են իրանց սերփական առողջութիւնը, այլև իրանց որդոց, որդոց-որդոց (ամբողջ սերընդի) հիւանդանալու և ոչնչանալու պատճառ են դառնում:

Գիտնականները շատ փորձեր են առած կենդանիների վրա և հաստատ իմացել են, որ սպիրտի ազդեցութեան տակ կենդանիները ծնում են հիւանդուտ, թուլակազմ ձագեր, որոնք երկար չեն ապրում:

Նոյնը կրկնվում է մարդկանց մէջ:

Ֆրանսիայում 814 երեխաներից, որոնք արբեցող ծնողներից էին ծնված, 174-ը

մեռել էին մի քանի ամսական հասակում։
Մի կին ամուսնանում է մի արբեցողի
հետ, նրանից ունենում է հինգ զաւակ,
որոնցից չորսը, տաս օրական չդառած, մեռ-
նում են, իսկ հինգերորդը ապրում է միայն
մինչև հինգ տարեկան հասակը։ Այս արբեցող
ամուսինը մեռնում է ու կինը մի ուրիշ
լրջակեաց (չխմող) մարդ է առնում ու նր-
անից ունենում է երկու բոլորովին առողջ
երեխայ։

Եթէ խմողների զաւակները չեն մեռ-
նում փոքր հասակում, նրանց սպասում են
հարիւր տեսակ հիւանդութիւններ, նոյն-
իսկ թռքախտ, այնպէս որ, մի երկու-
երեք սերնդից յետոյ, արբեցողի ցեղը
ջնջվում է... Ալկօհօլիկի ժառանդների մէջ
յաճախ պատահում են նոյնպէս գինեմոլ-
ներ։ Դրանք ժառանգական արբեցողներ են,
որոնց մէջ խմելը, գինովնալը մի պահանջ
է, մի հիւանդութիւն է։ Նրանք շատ յա-
ճախ անկարող են լինում զսպել իրանց—ը-
խմել, բայց հնար չկայ. — գրանք արդէն հիւ-
անդներ։ Ողորմելիները ծնվել ու մնվել են
թունաւորված ծնողներից և ժառանդել են

սարսափելի, անդիմադրելի ծարաւ դէպի
ալկօհօլը։ Աւելորդ է ասել, թէ ի՞նչ սոսա-
կալի գրութեան մէջ են ընկնում այդ խեղ-
ճերը և ինչպէս մեռնում։

Ալկօհօլիկների սերունդները տախս են
նոյնպէս ահազին թիւ յանցաւորների (գո-
ղերի, մարդասպանների, հոգեհ գցողների և
այլն), ապուշների, անընդունակների, ծոյ-
լերի, անբանների, որոնք սղարմութիւնով են
ապրում։ բայց ամենից սարսափելին այն է,
որ անբարոյական կանանց (աղոռնիկների)
մի խուռ մասը ալկօհօլիկների աղջիկներ
են լինում։

Մի բժիշկ յիշատակում է մի արբեցող
ընտանիքի պատմութիւնը 1710 թուակա-
նից ի վեր։ Այս ընտանիքի մէջ այնքան
անբան աղքատներ կային, որ նրանց կերա-
կրելու համար միայն ծախսվում էր տարե-
կան 2500 ռ., բացի այդ, 76 հոգի յանցա-
ւորներ էին եղել, 181 աղջիկ պոռնկու-
թիւնով էին պարապել և 142 հոգի թա-
փառականներ էին։

Մի ուրիշ բժիշկ դտել է, որ բոլոր
անցաւորներից 41 տոկոս (100-ից 41-ը)
արբեցող են կամ արբեցողների սերնդից

Են լինում... Մի արբեցող ընտանիքի սերունդ, որը 761 անդամից էր բաղկացած, տվել է 322 վատասեռված անդամներ, 171 ընկնաւորներ և 155 խելագարներ!

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Մարդու հաղար տեսակ հիւանդութիւնների, միլիօն տեսակ վտանգների է հանդիպում իր կարճատե կեանքում։ Աղէտները միշտ անպակաս են եղել մարդկութեան դլուից։

Միլիօնաւոր մարդիկ դո՞ւ են դնում ամեն տեսակ հիւանդութիւնների։

Ժանտախտ, խօլերա և զանազան ուրիշ վարակիչ հիւանդութիւններ սոսկալի աւերիչ հեղեղի նման անցնում են երկրիս վրայով և հազարաւոր, միլիօնաւոր մարդկանց որբում տանում։

Այս սարսափելի համաճարակ հիւանդութիւնները սարսափ են ազդում մարդկութեան վրա, մենք ամեն միջոցներով կռվում ենք նրանց դէմ; այնուինչ մենք ինքներս գիտակցօքէն տալիս ենք մեզ արբեցութեան ախտին, որը պակաս վնաս չի

պատճառում, քան յիշած հիւանդութիւնս ները։ Գոնէ նրանք սպանում են մարդկանց առանձին-առանձին և չեն դիպչում ժառանգներին, այն-ինչ ալկօհօլիկմը հիւանդացնում ու անպէտք է դարձնում ոչ միայն առանձին մարդկանց, այլ և ամբողջ սերունդներ։

Միայն սիֆիլիսը (վատ ցաւը) ու թուքախտը կարող են հաւասարվել ալկօհօլիկմին այս կողմից։

Ամեն մարդ իրաւունք ունի իր կեանքի վրա, բայց սարսափելի չարագործութիւնն է մի ամբողջ սերնդի հիւանդութեան ու մահուան պատճառ դառնալը։

Թո՛ղ ամենքը հասկանան այդ պատուէրը։

Թո՛ղ ամեն մէկը, երբ արագի թասը ձեռքն է առնում; հասկանայ, որ թոյն է խմում,—մի սարսափելի թոյն, որ ոչ միայն պիտի քայքայի նրա մարմինն ու դժբաղշացնի նրան, այլև նրա երեխաների ու սերնդի կործանման պատճառը պիտի դառնայ։

Մովսէս մարդարէն տասը պատգամներ տուեց մարդկանց։ Եթէ նա մեր դարերում

ապրէր, եթէ նա էլ տեսած լինէր ալկօհօս
լիզմի գործած սարսափելի աւերումները,
անշուշտ նա մի տասնըմեկերորդ պատգամ
էլ կտար մարդկութեանը, թէ.

«Մ Ի Խ Մ Ի Ր»



Հեղինակի միւս հրատարակութիւններ:

Ժանտախտ (մի քանի օրինակ միայն)	20 կ.
Խոլերայի մասին (սպառուած)	— 5 կ.
Խոլերա	5 կ.
Հիսլնոտիսմ հատ. I. (արուեստական քուն,	25 կ.
ներշնչումն, թովչութիւն)	118 երես.
Հիսլնոտիսմ հատ. II. (ընական քուն, հին	
դաւանութիւնները, դիւանականութիւն,	
ընդօրինակումն, ամբոխի հողերանու-	
թիւն)	84 երես 15 կ.
Դպրոցական առողջապահութիւն (պատկերա-	
զարգ)	50 կ.
Առողջ երեխանների խնամմատարութիւն	25 կ.
Սիֆիլիս, կակուղ շանկը, Սուսունակ (104 եր.)	25 կ.
Թշուառների բարեկամ բժիշկ Հատկ . . .	20 կ.

Մակավում են Կենդրոնական գրավաճառանոցում
կամ հեղինակի մօտ:

Ներկայ «ՄԻ ԽՄԻՐ» գրեսլի համար, իբրև նպաստ ստացանի Ցարիցինից պ. Օհաննես Սարգիս-
եանցից 25 ռ., որի համար հրապարակաւ յայտնում
ենք պարոնին մեր խորին ընորհակալութիւնը:

Այս նպաստը հնարաւորութիւն է տալիս մեզ
գրեսլիս զինը նշանակել

5 ԿՈՊ.

Շուտով լոյս կտեսնի

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐԻ № 2.

ՎԱՏ ՏԱՒ.

Հեղինակի հասցեն. Տիֆլիսъ, Д-ръ В. М. Апцруни.